

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## Հ Ա Ղ Բ Ա Տ Ի Դ Պ Ր Ո Ց Ի Մ Ի Գ Լ ՈՒ Խ Գ ՈՐԾ Ո Ց

(Գ Ե Տ Ա Շ Է Ն Ի Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ը)

(Շար. Սիսե 1934, էջ 209-166)



Երկրորդ մեծ մանրանկարը 17 ա. (պատկեր 4) Ընծայականն է, 21 x 14 1/2 սն. մեծությամբ. խմբանկարի կեդրոնում կանգնած է Յիսուս, իսկ կողքերից աւետարանն ընծայարկերոց Սահակ Անեցին և իւր եղբայրը Առաքել: Յիսուս երկու անդամ բարձր է, քան կողքին կանգնած եղբայները, մի միջոց նրա մեծութիւնը արտայայտելու,


բան, ոսկի տառերով սեւ եւ լոյս աշխարհի, որ դայ առ իս են. » գրած. ոսկեգօծ են և աւետարանի թերթերի եզրները, կողքից կախուած են կազմի կոպիչները: Աջով խաչակնքում է: Մօրուքը կարճ է և երկճիւղ, գլխի մազերը շագանակագոյն, որ իջնում են մէջքի վերայ և երևում են կողքերից: Բեխերը նուրբ և ծայրերը դէպի ցած թե-



(պատկեր 4)

որ գործադրում էր և ընդանդական մանրանկարչութեան մէջ. հազել է նա երկար, մինչև բոբիկ ստները հասնող տունիկայ-վերան ձգել է կարմիր երկար տողայ ձախ թևի վերայով, մի ծայրը մէջքին փաթած և բռնած ձախ ձեռքում: Նոյն ձեռքում բռնել է և կազմած, բաց աւետար-

քուած, շրթունքները կարմիր, բերանը կանոնաւոր, այտերը կեդրոնում թեթև կարմիր: Սաղաղ աչքերը ուղղուած են զիտողին: Դէմքի տպաւորութիւնը կենդանի է, բայց հանդարտ. գլխի շուրջը խաչազարդ, մեծ նիւթուս, կարմիր յատակի վերայ ոսկու փռով ծածկուած:



(պատկեր 5)

Յիսուսի աջ կողմից կանգնած է մի զգեստաւորուած վեղարուոր, որ վերան կապոյտ փիլոն է ձգել և որի առաջին քղանքները շնորհայի կերպով ցած են իջնում, հայրական սովորութեան համեմատ փիլոնի վերայից ձգուած է խաչազարդ եմփորոն, ծայրերը սուկեզարդով և ծոպերով վերջացած: Երկու ձեռքով, կարմիր թաշկինակի մէջ բռնել է սուկեզօժ աւետարան, որ մատուցանում է Յիսուսին: Հագել է սեխն մօտեցող շապիկ, երկար՝ մինչև կարմիր և անկրունկ կօշիկներով սունկը: Մօրուքը գորշ է և մեծ. բխերը նոյնպէս ալիստուն. աշտերը թեթև կարմիր, աչքերն ու յոնքերը սև և կանոնաւոր: Վեղարը սուր և հայրական, փէշերն առնուած փիլոնի տակ: Գլխի վերայ սև թանաքով և արեւելեան բոլորզրով գրուած է. «Բս. որդի Այ. ընկալ զքո սուրբ զաւետարանս ի մեղապարէս Սահակայ իրբև զխերեւելն այրոյն և ողորմեա»:

Ձախ կողմից ձեռքերն ազաւարի նման պարզած է համեմատաբար աւելի երիտասարդ մի ֆիլոյոր, հագել է գօտեորած պարեզօտ, կամ երկար պատմօձան, կարմիր յատակի վերայ սուկի ծաղիկներով. թեքը չեն սեղմուած: Կօշիկներն անկրունկ են, երկու կտորից, զձեռով իրարից որոշուած, նման Տր-ի Ծերենիկի կօշիկներին, միայն առանց ծոպերի: Մօրուքը մեծ է, ծայրից փոքր ինչ ձեղքուած և արդէն սպիտակել սկսած. բայց գլխի մազերը սև են և կողքերից ուսերի վերայ իջած: Գլխարկ չունի և վերը գրուած է. «Առաքել ծառայ Այ.»:

Մանրանկարի երկրորդ կանաչ է, շրջանակներ կարմիր, վերան գրչով արմաւենիկը յիշեցնող բուսական գորգով ծածկուած:

Ձ.

Մնացած մեծ մանրանկարները աւետարանիչներն են իրենց սկզբնազարդերով. բայց այստեղ ևս Մարգարէն ցոյց է տալիս իւր ունակութիւնները, որքան և նրա թուականական լինի. 18ր — 19ա. Մատթէոսն է իւր սկզբնազարդով. աւետարանիչը, 20, 8 x 15, 2 սն. մեծութեամբ շրջանակի հետ, նստած է առանց թիկունքի աթոռակի վերայ (պատկ. 5), որի երկու սաներն

ու նստելու տեղի մի կողքը երևում են, գրչով զարդարուած, սճաւորած բուսական զարդերով. հագել է երկար, մինչև ոտները հասնող աւելիկայ և ձախ թևի վերայից ձգել կապտաւուն տոգան, երկուսն էլ շնորհայի կերպով ծալքաւորած: Ոտներին սանդալ է, որի կապերը երևում են սաների վերայ: Ձախով բռնել է բաց գիրքը, իսկ աջով եղեգնեայ գրիչը դրել վերան՝ գրելու համար: Մօրուքը մեծ է և ծայրը թեթև երկուսի ձեղքուած, որ արդէն սպիտակել է սկսել, նոյնը և բխերը. շրթունքները և սիրուն ձեւակերպուած աշտերը թեթև կարմրաւուն են, աչքերը մօքերի ամփոփման արտայայտութեամբ, սև բիւրերով և ունքերով. գլխի մազերը համեմատաբար աւելի սև են, հազիւ նկատելի թեթև ալիստունութեամբ: Աւետարանչի զէմքն ուղղուած է զէպի ձախ, երեքքաւորական պրոֆիլով: Գլխի շուրջը մեծ և բոլորակ նիւթուս ունի, կարմիր աստուրը սուկի փոշով ծածկուած:


Աւետարանչի առաջ գրուած է սեղան, որի կէս մասն է երևում. սեղանի շրջանակը բուսական գեղեցիկ օրնամենտով. սեղանի վերայ շարուած են գրչութեան գործիքները, կարկին, մկրատ, մագաղաթը ձեռելու մուշտայ և թանաքաման, զոյգ գրիչներ, զանակ և քերիչներ, վերջինները, տարաբաղդարար կիսով չափ փշացած, ուստի և նրանց ձեռի մասին պարզ զաղափար չենք կազմում: Սեղանի կողքից ձողի վերայ բարձրանում է գրակալը, բացուած օրինակով, որ յունարէնն է յիշեցնում: Աւետարանչի առաջից՝ հետաւոր տեսարանը ճարտարապետական շէնքի մի անկիւնն է, երկու լուսամուտներով և թեք կաուրի անկիւնամասով: Եկարի ֆոնը կապոյտն է: Ծրջանակը զարդարուած է գրաֆիկ, բուսական գեղեցիկ զարդով:

Ամբողջ մանրանկարը թողում է բարձր արուեստի տպաւորութիւն:

Սկզբնազարդը առանձին նորութիւն չէ տալիս, երկու իրար կողքի, երեքքաւորական բոլորակները մէջ գրուած է աւետարանի վերնազիրը. սկզբնազարդի մակերեսը զարդարուած է բուսական սճաւորած մտախների մեծ և փոքր վարդակներով. երկու լուսնեալի մէջտեղից կախ-

ուած է ձուածեա ողիոյց, եզերուած ոսկի գծով: Պ.ի մտախնայուն են ներքեից վերև՝ հիւսիկէն, պարանահիւս օգակներէ մէջ սնցրած՝ ձողի վերայ, չորս թեանի տաօղաձեեր, զրի պոչը արմաւենիկով վերջացած: Իրի տասերի մտախնայուն են ութաձեեր և օգակներ, ոսկեով, կապոյտով, կարմրով և սպիտակով երփնաւորած: Էստանցքի զարդի հիմքը մի քառակուսի է, մէջը երկրօղակափական զարդերով, նրա վերայ բարձրանում է միջին մասը՝ հիւսուածքի և արմաւենիկի զարդերով և վերջաւորուած խաչով, կիսալուսնի տակ:

Նոյ տունիկայ, ծալքերը մոյզ նարնջագոյնով ստուերած, տողան ձգել է ձախ ուսի վերայից, փաթաթել մէջքին և փէշերը ցած թողել ծնկների վերայից, Տիւս մասերով ծածկելով ազգրներն ու ծնկները. տողայի գոյնը գորշ նարնջագոյն է, ծալքերը բաց մանիշակագոյնով ստուերած: Աջ ձեռքը, բռնած զրշով, շնորհալի անփութութեամբ ցած է թողել ծնկան վերայ, խի ձախով բռնել է ձողուոր գրակալի վերայ բացուած իւր աւետարանը՝ «Սկիզբ աւետարանի յի. քի. | որպէս գրեալ Եսայի մարգ. » սկսուածքով: Ուս-



(պատկեր 6)

Մարկոսը՝ 112բ. (պատկեր 6) բազմած է զարձեալ ցածրաթիւունք աթոռակի վերայ, մանրանկարի մեծութիւնը 22<sup>1</sup>/<sub>2</sub> × 14,8 սմ, որի սաները և նստելու տեղի կողերը զարդարուած են արմաւենիկ և այլ մտախնայունով. աւետարանիչը հազել է նարնջագոյն, լայնաթեւ և մինչև սաները հաս-

քերի վերայ նկատելի են սանդալի կապերը: Մօրուքը կարճ է և սև, ինչպէս և բիսերը, խի զլսի մագերը երկար և ցած իջած թիւունքից: Քիթը, աչքերն ու յոնքերը կանոնաւոր, այտերի կեղրոնը թեթեւարմիր: Ունի բոլորակ մեծ նիւթուս, ոսկու փոշով ծածկուած երեսը: Մանրանկարի

աջ եւ ձախ կողքերից որպէս շրջանակ, բարձրանում են ողորկ բուներով և ականթի զարդերի խոյանկներով սրունքը, որոնց վերայ ձգուած է բեկուած կամարը: քովթարը ծածկուած արմաւենիկը շիշեցնող բուսական զրաֆիկ զարդերով, անկիւններում այս զարդերի մէջ մի մի նուրբ կազմուածքով թռչուն, զէմքերն իրար ուղղած: Պէտք է ասել արուեստի այս անխ-

նիկան հազուադիւտ է Հայոց մէջ և մահմետական, պարսկական արուեստի ազդեցութեան հետքեր պէտք է համարել:

Գրասեղանի պահարանի մէջ գատուբուած են անհրաժեշտ գործիքներն ու անոթները, դանակ, մկրատ, թանաքաման, ջրամաններ:

ԳՍԲԵԴԻՆ ՍԲԲԵՊՍ. ՅՈՒՍԷՓԵԱՆ  
(Շարունակիչի)

# ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ

## Ա Ր Շ Ս Մ Ի Դ Ր Ա Մ Ը

Հին գրամներու կարգին՝ ΑΡΣΑΜΕΣ (Արսամէս) վերտառութեամբ գրամ մը կը գտնուի, զոր կը նոյնացնեն գրամագէտք՝ Մովսէս Խորենացւոյ «Արշամ»-ին հետ, և կը գտան Փոքր Մոփաց հայ թագաւորներու կարգը, շիրինալով ուրիշ տեղ տալ անոր. բայց մանրամասն քննութենէ եւ խորազնին ուսումնասիրութենէ ետք կը համոզուինք, որ Արսամէսի ընծայուած այս գրամը կապագադիկոյ և կամ՝ աւելի հաւանականորէն՝ կոմմագենէի վրայ իշխող թագաւորներէն մէկուն կը պատկանի, ոչ թէ Հայոց, և ոչ իսկ Սորոյների, որ այս անունով թագաւոր չի ճանչնար:

Դրամին առաջին կողմին պատկերը կը ներկայացնէ Արսամէսի աջ զարձած կիսանդրին, զլուխը զգալ (calotte) և արքայական ապարօշ: Այս զգալը՝ հակառակ Վիկտոր Լանգլուայի<sup>(1)</sup> և Ե. Բարլոնի<sup>(2)</sup> կարծեաց՝ «հայկական» չէ, այլ

լատին քահանաներու զգալին նման զլուխալիբ (coiffure) մը, որ ամբողջ մազերը կ'ընդգրկէ և ճակատէն խոպոպիկներ դուրս կուտայ, ինչպէս որ անձամբ ստուգած եմ այս պարագան:

Երկրորդ կողմը կը ներկայացնէ զէպի աջ վաղող նիզակակիր ձիաւոր մը, որուն զլիսուն վերեւ գրուած է՝ երկու ատրի վրայ՝

ΒΑΣΙΛΕΩΣ  
ΑΡΣΑΜΟΥ

այսինքն՝ «Արքայի Արշամայ»:

Այս ձիաւորը շատ մեծ նմանութիւն ունի կապագադիկոյ Արիարամնէս թագաւորին պղնձէ գրամին երկրորդ կողմին, ինչպէս կը շեշտէ Ե. Բարլոն իր յիշեալ պատուական գործին մէջ, երես CXCIII: Եւ կոմմագենեցիք՝ Ն. քան զՔ. 140-ին՝ «Մամէս» անունով թագաւոր մը ունեցած են, որուն մայրաքաղաքն էր Սամսատ, Շամուշատ կամ Շամշատ, և որուն գրամին վերտառութիւնն է՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΣΑΜΟΥ, այսինքն «Արքայի Սամայ»:

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

(1) VICTOR LANGLOIS. Numismatique de l'Arménie dans l'antiquité. Paris, 1859:  
(2) ERNEST BABELON, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris, 1890: